


**Mowsēs Horenaçou noragojn ałbiurneri masin  
khnnadatakan ousoumnasirouthiunkh**

**Grigor Halatheanç**

**Xalat'eanc', Grigor**

Goussen 2969 (27)





g 2969  
27 1898

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ

Էջ. 27

# ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ

ՆՈՐԱԳՈՅՆ ԱՂԲԻՒՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

ԳՐԵՑ

ԳՐ. ԽԱԼԱԹԵԱՆ


ՈՒՍՈՒՑՁԱԳԵՑ ՀԱՅԵՐԷՆԻ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ



ՎԻՆՆԵԱ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1898.



Մ Ո Վ Ս Է Ս Խ Ո Ր Ե Ն Ա Ց Ո Ւ

ՆՈՐԱԳՈՅՆ ԱՂԻԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ

ԲԷ.

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ

ՆՈՐԱԳՈՅՆ ԱԳԻՒՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՔՆՆԱԳԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ



Վ. Ի. Ե. Ն. Ն. Ա.

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1898.



# ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ

ՆՈՐԱԳՈՅՆ ԱՂԲԻԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

ԳՐԵՑ

ԳՐ. ԽԱԼԸԹԵԱՆ

ՈՒՍՈՒՑՉԱՊԵՑ ՀԱՅԵՐԷՆԻ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ




ՎԻԵՆՆԱ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1898.

2967



Մովսէս Խորենացու աղբիւրների  
քննական ուսումնասիրութիւնը օրէցօր  
աւելի պարզում ու լուսաբանում է հայ  
պատմագրիս վերաբերեալ ամենակարեւոր  
խնդիրները՝ այն է — նորա ամանդած  
պատմութեան հառաստիոթեան սատի-  
ճանը եւ նորա ապրած ժամանակի որոշ  
սահմանները: Պէտք է ամեն կերպ աշխա-  
տել հրատարակել բոլոր՝ Խորենացուն ուղ-  
ղակի կամ անուղղակի վերաբերեալ աղ-  
բիւրները, առանց միտ դնելու՝ արդեօք  
նպաստաւոր հետեւանքներ են նորա առա-  
ջացնում մեր մատենագրի համար, թէ  
աննպաստ: Միայն այսպիսի լուրջ եւ ան-  
կողմնասէր վերաբերութեամբ հնարաւոր է  
յիշեալ խնդիրների վերջնական լուծմանը  
հասնել, — մի հանգամանք, որ առաջնա-  
կարգ կարեւորութիւն ունի ընդհանրապէս  
հայ պատմութեան եւ գրականութեան  
համար: Բաւական է դիտել, որ առանց

այդ խնդիրների լուծմանը անկարելի է մտածել անգամ Ազգային Պատմութեան գիտնական մշակման մասին՝ շնորհիւ այն քացառիկ դիրքին, որ բռնել է Խորենացին մեր պատմական գրականութեան մէջ:

Հազիւ մի տարի առաջ՝ Հայոց հին Վէպերի մասին գրած ուսումնասիրութեան մէջ ես ի միջի այլոց, ենթադրել էի, թէ Խորենացին օգտուած պէտք է լինի նա՛եւ եօթներորդ դարու առաջին կիսի երկու հայ մատենագիրներից — Սեբեոսից եւ Անանի. Շիրակացուց, որ կասկածելի երեւեց ոմանց. իսկ այժմ՝ նորերս հրատարակուած Սոկրատի Եկեղեցական Պատմութեան եւ Ս. Սեդեւատրոսի Վարքի հայերէն թարգմանութիւնները գալիս են՝ ըստ երեւութին, անհերքելի փաստերով հաստատելու իմ կարծիքս եւ Խորենացու գործածած աղբիւրների ժամանակը առաջ քաշելու առնուազր մինչեւ եօթներորդ դարու վերջին չորս տարիները, այն է՝ մինչեւ 696 թուականը:


Այս վերջին կէտի ապացուցանելուն է նուիրուած եւ առաջիկայ քննական յօդուածը, որ նախապէս մաս մաս լոյս

Է

տեսաւ “Հանդէս Ամսօրեայ,” թերթում  
(N. N. 10, 11, 12, 1897 թ.) վերոյիշեալ  
Սոկրատի Եկեղեցական Պատմութեան  
հայ թարգմանութիւնների հրատարակու-  
թեան առթիւ:

ԳՐ. Խ.





# ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ

ՆՈՐԱԳՈՅՆ ԱՂԲԵՐԲԵՆԵՐԸ

ՄԱՍԻՆ

Արջապէս լոյս տեսան նորերս Ս. Էջմիածնի տպարանից վաղուց սպասուած Սոկրատի եկեղեցական պատմութեան երկու հայ թարգմանութիւնները մի գրքում՝ իրենց կից Ս. Սեղբեսարոսի վարքի նոյնպէս երկու հայ թարգմանութիւններով<sup>1</sup>, որոնց այնչափ կարեւորութիւն են ընծայում Մ. Խորենացու Պատմութեան քննադատական ուսումնասիրութեան տեսակէտից: Այս՝ մի ստուար հատոր է՝ 936 էջից բաղկացած. իւրաքանչիւր երեսում յաջորդաբար զետեղուած են երկու թարգմանութեան բնագիրների համապատասխան հատուածները, —

<sup>1</sup> Սոկրատայ Աբուլաստիկոսի եկեղեցական պատմութիւն. թարգմանեաց Փիլոն Տիրակացի, եւ Պատմութիւն վարուց Սրբոյն Սեղբեսարոսի եպիսկոպոսին Հռովմայ. թարգմանեալ Աբասուն Գրիգորի Չորոփորեցւոյ, հատոր Ա. եւ Բ. աշխատասիրութեամբ Մեսրոպ Ա. Տէր Մովսէսեան, միաբանի Ս. Էջմիածնի. Ազգարչապատ, տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1897, 8<sup>0</sup>:

Նախ՝ Մեծ Սոկրատիներ խոշոր տառերով եւ ապա՝  
 Փոքր Սոկրատիներ միջակ տառերով. այդ բնագիր-  
 ներից իւրաքանչիւրը ունի իրեն վերաբերեալ  
 հրատարակչից դրած մեկնողական եւ ձեռա-  
 գրական ծանօթութիւններ, որոնք բուն գրուած-  
 քից զանազանելու համար տեղաւորուած են  
 մանր տառերով: Ընդհանրապէս հրատարակու-  
 թեան ձեւն ու տեսակը աջող կարելի է համա-  
 րել. տպագրութիւնն էլ (բաց առնելով գրքի  
 առաջին մասի մի քանի թերութիւնները), որպէս  
 եւ թուղթը վատ չեն՝: Մեծ շնորհակալութիւն  
 գրքի հրատարակիչ Արժ. Հ. Մեսրոպ Տէր Մով-  
 սէսեանին, որ այսչափ ջանք եւ աշխատութիւն  
 է գրել այդ բազմածաւալ եւ կարեւոր գործի  
 վերայ: — Բուն Սոկրատի Եկեղ. պատմութեան  
 հայ թարգմանութիւնները բռնում են գրքի  
 էջ 1—690. այնուհետեւ 691—799 էջը  
 Ս. Սեղբեստրոսի Ընդարձակ եւ Համառօտ Վար-

1 Ափսոս որ հրատարակիչը՝ հաւատարմութեամբ  
 պահպանելով գրչագրերի «աղագրութիւնը», չէ հոգացել  
 ամէն անգամ ճիշտ որոշելու սովորականից տարբերող  
 դէպքերը որ եւ է միջոցով՝ օր. Նօրագրութիւն, որպէս զի ջը-  
 շփութուին դոքա տպագրական վրիպակներէ հետ, որոնց  
 թիւը բաւական մեծ է (տես էջ 829—834): Լաւագոյն էր  
 նշանակել. Եքսորել, Էեդ, Էեջ, զայրագնեալով, Սամբա-  
 տիոս (Σαββάτιος), վաչուն, փոյթալիք, քղամիտ եւ այլն:  
 Միւս կողմից՝ անյարմար եւ աննպատակ ենք գտնում հրա-  
 տարակչի ուղղութիւնը (որի թերութիւնը՝ թէեւ փոքր ինչ  
 ուշ, ինքն էլ է նկատել) — բառացի ճշտութեամբ արտա-  
 տպել՝ հարկաւ մեծ մասամբ տգէտ ընդօրինակողներից առա-  
 ջացած, բազմաթիւ տառասխալներով վատացող Սոկրատի  
 թարգմանութեան հայ բնագիրները:



քերն են: Մեծ դիւրութիւն է ընծայում ընթերցողին եւ հրատարակչի կազմած «Յանկ յատուկ անուանց», — էջ 801—827: Իւր հրատարակութեան սկիզբը դնում է Հ. Մեսրոպ եւ մի ընդարձակ Յառաջաբան (էջ Ա—ՃԱ)՝ 15 յոգուածի վերածած, որ իսկապէս մի քննական ուսումնասիրութիւն է հայ թարգմանութիւնների, ձեռագրերի, թարգմանիչների անձնաւորութիւնների ու նոցա ժամանակի մասին, որպէս եւ Մ. ու Փ. Սոկրատի եւ Սեղբեստրոսի վարքի խորենացու Պատմութեան հետ ունեցած աղերսի մասին:

Ներկայ հրատարակութիւնը հետաքրքրական է շատ կողմերով. ուստի նա անշուշտ կ'առաջացնէ գիտական գրականութեան մէջ հետազօտութիւնների մի շարք ո՛չ միայն հայ գրականութեամբ, այլ մանաւանդ Սոկրատի Եկեղ. Պատմութեան եւ Ս. Սեղբեստրոսի վարքի բնագիրներով զբաղուողների կողմից՝ ի նկատի առնելով հայ թարգմանութեան հնութիւնը եւ բառացի ճշտութիւնը: Սակայն մենք կը բաւականանանք այս անգամ կանգ առնել հրատարակչի Յառաջաբանում առանձնապէս շեշտած եւ մեր տեսակէտից կարեւորագոյն մի խնդրի վերայ, այն է՝ ի՞նչ առընչութիւն ունի խորենացու Պատմութիւնը Սոկրատի Եկեղ. Պատմութեան եւ Սեղբեստրոսի վարքի հայ թարգմանութիւնների հետ:

Բայց նախապէս անհրաժեշտ ենք համարում մի քանի խօսք ասել ընդհանրապէս մեզ

Տետաքրքրող գրուածքների հայ թարգմանութիւնների մասին: Սոյն կէտի վերաբերմամբ հրատարակիչը իւր Յառաջաբանում այսպիսի հետեւանքների է գալիս.

Մեծ Սոկրատը թարգմանել է յունարէնից Փէլոն Տէրմիային՝ 696 փրկչ. թուականին՝ համաձայն էջմիածնի եւ Երուսաղէմի՝ նոյն գրուածքի գրչագրերի յիշատակարաններին: (Ասողիկ գնում է 671—678 թ:) — Սեղբեստրոսի Ընդարձակ վարքը թարգմանել է Աբաս Գրեթոր Չորոյթորեցին՝ համաձայն նոյն յիշատակարաններին, 18 տարի առաջ, այն է՝ 678 թ: Երկու երկն էլ, — որոնք «շուտով միացան մի գրքի մէջ», թարգմանուած են նոյն ժամանակները յայտնի՝ իշխան Ներսէս Կամարուհանի հրամանով: (Յոջբն. էջ Դ—ՂԱ.) — Աբաս Գրեթոր Չորոյթորեցին ոչ այլ ոք է, եթէ ոչ նոյն Գրիգորիս Քորեպիսկոպոս Արշարունեաց, որ՝ ըստ Ասողիկի՝ գրել է «Ընթերցուածոց մեկնութիւն» գիրքը, նոյն Ներսէս Կամարուհանի խնդրանօք: — Փոքր Սոկրատը եւ նորասկիզբը ղետեղած Սեղբեստրոսի Համառօտ վարքը համարօրոյթին են Մ. Սոկրատից եւ Սեղբեստրոսի Ընդարձակ վարքից, ուստի սոցանից յետոյ կատարուած՝ անանուն, անյայտ մէկի ձեռքով: (Անդ, էջ 42 եւ յաջ. :)

Համաձայնինք առ այժմ, որ Մ. Սոկրատի երկու գրչագրերի յիշատակարանների տուած տեղեկութիւնները թարգմանութեան ժամա-

նակի մասին աւելի վստահելի են, քան Աստ-  
ղիկի ցուցումը, բայց դորանից կարելի է ար-  
դեօք հետեւցնել, թէ Փիլոն Տիրակացին կա-  
տարել է իւր թարգմանութիւնը յատկապէս  
Ներսէհ Ամսարականի հրամանով: Ի հարկէ ոչ: Եւ  
որ տեղից այս գիտէ հրատարակիչը: Այս մի  
ենթադրութիւն է, որ հիմն չունի:

Անհիմն է դարձեալ հրատարակչի պըն-  
դումը՝ թէ «Ներսէհ Ամսարականի» հրամանով է  
ձեռնարկել Աբաս Գրիգոր Չորոյփորեցին Սեղ-  
բեստրոսի ընդարձակ վարքի թարգմանութեան:  
Վերոյիշեալ վստահելի յիշատակարանը, որ ա-  
մէն անգամ ցաւակցաբար ոչ ցանկալի ճշտու-  
թեամբ է մէջ բերուած հրատարակչից<sup>1</sup>, եւ որի  
բնագրի լուսատիպը բարեբախտաբար ունիմ իմ  
ձեռքս իւր իսկ՝ Արժ. Հ. Մեսրոպի շնորհիւ,  
բառացի այսպէս է.

«Յառաջ քան զութուտասն ամ ի թարգ-  
մանելոյ Փիլոնի զգիրսդ զայդ Սոկրատայ զեկե-  
ղեցական պատմութիւն թարգմանեալ էր Աբա-  
սուն Գրիգորի Չորոյփորեցւոյ թարգմանի ընդ  
փառաւորս յիշելոյ Ներսէհի Աբաց իշխանին փե-  
սային Ամսարականաց զգիրս պատմութեան  
վարուց սրբոյն Սիղբեստրոսի էպիսկոպոսին Հռով-  
մայ, եւ կայր ի քարտիսի. այժմ պատշաճ հա-  
մարեցաք առ դմին գրոց գրել:»

«Ներսէհ Ամսարական» մենք այստեղ չենք  
գտնում, ինչպէս պնդում է միշտ հրատարակիչը.

<sup>1</sup> Տես Յոս. Եջ. ԾԷ. 26 եւ Սեղբ. վարքի նախ-  
ընթաց էջը՝ առանձին խորագրով:

խօսքը Աբայ Ներսէ՛ճ իշխանի մասին է, որ կամ-  
սարականներին փեսայ էր: Մի անգամ այս  
թերիմացու թիւնը առաջանալով՝ հրատարակիչը  
այնուհետեւ անդադար կրկնում է իւր սխալը,  
եւ Աբաս Գրիգորի Չորոյփորեցու Մեկենասին՝  
Ներսէ՛ճ կամսարական է կոչում միշտ՝ փոխանակ  
կամսարականների փեսայ Աբայ Ներսէ՛ճ իշխանի՝:

Այս այսպէս լինելով՝ կը զրկուի հիմուն-  
քից հրատարակչի եւ երրորդ տարօրինակ են-  
թագրութիւնը, որով նոյնացնում է նա Աբաս  
Գրիգոր Չորոյփորեցուն Գրիգորիս Արշարունեաց  
քորեպիսկոպոսի հետ: (Յոջբն. էջ 2Ե—2Ը.)

Եթէ անգամ բռնազբօս մեկնութիւն չը-  
տանք այդ նոյնացման մասին ազգային մատենա-  
գիրների կատարեալ լռութեանը, եթէ միտ չը-  
դենենք այդ երկու անձնաւորութիւնների զանա-  
զան անուններին եւ կոչումներին,<sup>2</sup> եթէ  
նկատի չառնենք նաեւ նոցա ընծայուած գրուածք-  
ների լեզուի ու ոճի գլխովին տարբերութիւնը,  
որ այսու ամենայնիւ բարձրաձայն բողոքում է  
հրատարակչի նոյնացման դէմ, եւ թոյլ տանք

1 Մի «Ներսէ՛ճ իշխան Աբայ», յատկապէս 677—  
687 թուերին յիշում է Յովհաննէս Կաթողիկոս. «Յաւուրս  
տորա (Իսրայէլ Կթիսի.) զԲառարայ ոմն զօրագլուխ զօրուն  
Տաճկաց որ ի Հայք՝ վանեալ վասնէ կոտորմամբ սաստիւ  
Ներսէ՛ճ իշխան Աբայ՝ փախստեայ զնա արարեալ»: (Տպ.  
Երուս. էջ 118:)

2 «Չորոյփորեցի» ծննդավայրի կոչումն է, որ անշուշտ  
պէտք է պահէր Աբաս Գրիգորը իւր կայս. ձեռնագրուելուց  
էլ յետոյ: Հմմտ. Եղնիկ Կողբայի՝ եպիսկոպոս Բագրեւ-  
անդայ, եւ ուրիշ շատերը:

մի րոպէ, թէ Գրիգորի՝ Արշարունեաց քորեպիսկոպոսը իւր արեղայութեան ժամանակ, այն է՝ Դնչ- 684 թուականը, ինչպէս բացատրում է հրատարակիչը (էջ 2է), արդարեւ Աբաս Գրիգոր Չորոյփորեցի էր կոչուում, — ինչպէս հապա նոյն անձի եպիսկոպոս ձեռնադրուելուց 10—12 տարի էլ յետոյ, այսինքն 696 թուականին, Սեղբեստրոսի վարքի վաւերական յիշատակարանը շարունակում է հանգիստ կերպով “Աբաս Գրիգոր Չորոյփորեցի” անունները նորան, առանց ակնարկելու Արշարունեաց Գրիգորիս քորեպիսկոպոսի մասին, որ յատկապէս 696ից բաւական վաղ<sup>1</sup> հռչակուած էր իբրեւ յայտնի իմաստասէր ու գիտնական եւ Հայոց նուիրապետութեան մէջ ականաւոր անձն:

Այսպէս ուրեմն՝ թողնելով Աբաս Գրիգորին իւր սեպհական գոյութիւնը ունենալ, իբրեւ անկախ անհատ՝ զատ Գր. Արշարունեաց եպիսկոպոսից, մենք աւելի բնական կը գտնենք եւ նորա Չորոյփորեցի կոչումը, որ տանում է մեզ դէպ ի Գուգարք՝ այդ փոփոխակի Հայոց եւ Արաց իշխանութեան տակ գտնուող աշխարհը,

<sup>1</sup> Ասողիկի յիշատակութիւնը Արշարունեաց Գր. Գրիգորի մասին 688 թուականին է: — Ի դէպ է յիշել, որ նոյն Գր. Արշարունեաց՝ հակառակ Հ. Չամչեանի ցուցման (Բ. 343, 562), մասնակցել է ըստ երեւութին, եւ Մանազկերտի ժողովին (726 թ.), ուստի եւ վախճանուած պէտք է լինի նա ոչ 713 թուին, ինչպէս դնում է եւ Հ. Մեսրոպ (Յաջր. էջ 2է.), այլ գոնէ 726ից յետոյ: Մանազկերտի ժողովի մասին տե՛ս նաեւ Հ. Յ. Տաշեանի Յուցակ Հայեր. ձեռագր. Վիենն. Մխիթ. էջ 768:

ուր Աբայ Ներսէ՛ճ իշխանը բնականաբար  
ամէն գիւրութիւն կարող էր ունենալ իւր  
գաւառի վանականներից մէկին իւր մեկնա-  
սութեան շնորհները ցոյց տալու :

Իսկ վերաբերութեամբ Փ. Սոկրատի (եւ  
նորան կից Սեղբեստրոսի Համառօտ Աարքի) ծագ-  
ման մասին Հ. Մեսրոպի յայտնած եղբակացու-  
թեան — մենք համամիտ ենք հրատարակչի  
հետ. այդ գրուածքը արդարեւ համառօտութիւն  
է Մ. Սոկրատից եւ Սեղբեստրոսի ընդար-  
ձակ վարքից, ինչպէս պարզ երեւում է երկուսի  
բնագիրները իրարու հետ մանրամասն բաղ-  
դատելուց :

\* \* \*

Պանք այժմ մեր գլխաւոր խնդրին՝ այն է  
Սոկրատի Պատմութեան եւ Սեղբեստրոսի Աարքի  
հայ թարգմանութիւնների խորենացու Պատ-  
մութեան հետ ունեցած աղերսին, որից պրոֆ.  
Կարիէր եւ ուրիշները հայ պատմագրի համար  
յայտնի աննպաստ հետեւողութիւնն են անում,  
իսկ Հ. Մեսրոպ իւր Յառաջաբանում աշխա-  
տում է՝ ընդհակառակն՝ ապացուցանել խորե-  
նացու անկախ լինելը յիշեալ գրուածքներից :  
Ընդհանրապէս դիտելու է, որ Հ. Մեսրոպ՝ շնոր-  
հիւ ինչ որ սկզբունքի՛ ասեմ, թէ կանխակալ  
կարծիքի, նախազճռում է այն վիճելի խըն-  
դիրը, որ այժմ մանրակրկիտ ուսումնասիրու-  
թեան, քննադատութեան եւ ամէն տեսակ հե-  
տազօտութեան առարկայ է դարձած գիտնա-  
կան աշխարհում, այն է՝ խորենացու որ դարու

Տեղինակ լինելը: Սոկրատի հրատարակիչը ոչ  
աւելի, ոչ պակաս ասում է. «Խորենացին է եւ  
էլ շարժանի ճաշ ե. որ դարում ապրող, նոյն  
դարում գրող Սահակ եւ Մեսրոպ մեծ ուսու-  
ցիչների աշակերտը»: (Յուզբն. էջ ԽԱ:)

Հ. Մես. Տէր Մովսէսեանը այսպէս է  
ձեւակերպում իւր «վերջնական» եզրակացու-  
թիւնները, որ հարկաւոր ենք համարում ամ-  
բողջութեամբ առաջ բերել:

1. «Խորենացին չէ ձանաչել Սոկրատի  
եկեղեցական Պատմութիւնը, եւ ոչ էլ որ եւ է  
կերպ օգտուել նրա յունարէն կամ հայերէն  
բնագրից. բայց օգտուել է Սեղբեստրոսի վար-  
քից, թէեւ ոչ մեր ձեռքը հասած հայերէն  
թարգմանութիւնից»: (Յուզբն. էջ ԽԹ:)

2. Սեղբեստրոսի վարքի մեր ձեռքը չհա-  
սած հայերէն թարգմանութիւնից զատ՝ Խորե-  
նացուն իբրեւ աղբիւր ծառայել են նաեւ Ագա-  
թանգեղոսի գրուածքում մի ժամանակ գոյու-  
թիւն ունեցած եւ նոյնպէս մեր ձեռքը չհա-  
սած մասերը: (Անդ, էջ ԾԱ. 4—4Ա:)

3. «Մովսէս Խորենացին շատ յայտնի եւ  
համարեա կանոնական նշանակութիւն ստացած  
Տեղինակն էր այն ժամանակ, երբ կրճատւում  
էր Մեծ Սոկրատը, եւ համառօտողը խոնարհե-  
լով նրա մեծ Տեղինակութեան առաջ, նոյն իսկ  
իւր բնագիրը՝ ըստ այնմ է փոխում, շարունակ  
օգտուելով Խորենացուց»: (Անդ, էջ 4Զ:)

Քննենք մի առ մի այս կէտերը:

## 1.

Թէ խորենացին ճանաչել է հայերէն Սոկրատի պատմութիւնը համառօտած՝ այդ ապացուցել է, եւ մեր կարծիքով՝ համոզեցուցիչ կերպով, պրոֆ. Կարիէր («Ազգային Մատենադարան», Ը. եւ ԺԳ. Վիեննա, 1893—94:) Մենք էլ հարեւանցի զբաղուել ենք նոյն խնդրով մեր „Армянскій Эпосъ“ հետազօտութեան մէջ (էջ 19—32): Այժմ Սոկրատի լոյս տեսած լիակատար հրատարակութիւնը միջոց է տալիս մեզ թէ՛ հաստատել ֆրանսիացի գիտնականի ցուցումները, եւ թէ՛ բացի դորանից՝ ապացուցանել հայ պատմագրի կախումը նաեւ Մեծ Սոկրատին կից Սեղբէսարոսի Ընդարձակ վարդի:

Պէտք է նկատել, որ մինչեւ այսօր ուսումնասիրութեան նիւթ եղած խորենացու Պատմութեան նմանութիւնները Համառօտ Սոկրատի հետ՝ վերաբերվում են այնպիսի դէպքերի, ուր երկու գրուածքն էլ Ֆիւնոյն, համանման անցքերի եւ անձերի մասին են աւանդում, ինչպէս պրոֆ. Կարիէրի ցոյց տուած Կոստանդիանոսի հրաշքով հաւատալը, Վրաց դարձը, Նիկիական ժողովը, որպէս եւ այն բոլոր օրինակները, որ առաջ է բերել Հ. Մեսրոպ<sup>1</sup> (էջ Ծ—Հ.): Այս հան-

1 Հ. Մեսրոպ, շգիտեմ, մոռացմամբ արդեօք շփոթում է Ա. Կարիէրի ակնարկած խորենացու (Բ, 88) մի այլ աղբիւրից՝ Մաղաղասից (Զ. դարու վերջը) քաղած փոխառութիւնները Փ. Սոկրատի հետ: (Յաջքն. էջ ԿԳ:) Նոյն Մաղաղասին է վերագրում ֆրանսիացի գիտնականը եւ խորենացու Բ. գրքի 83որդ գլխի սիգնան բառը, որ Հ. Մեսրոպ հակամէտ է Ագաթանգեղին յատկացնել: (Անդ, էջ ԾԱ:)



գամանքն է, որ տեղիք է տուել Սոկրատի հրատարակչին եղրակացնելու, թէ Համառօտողը Մ. Սոկրատի եւ Խորենացու աւանդած նոյն անցքը պատմելիս՝ «նրան սրբա գրում է համաձայն անպայման հեղինակաւոր Խորենացու Պատմութեան» (էջ ԾԵ). եւ կամ՝ «Համառօտողը Սոկրատի պատմութիւնը համապատասխան չգտնելով բուն ազգային պատմութեան, որի բացարձակ հեղինակութիւնը Խորենացին էր», ուղղակի դորանից է օգտվում (էջ ՀԵ.):

Բայց մենք առաջ կը բերենք այս անգամ այնպիսի օրինակներ, ուր պատմութեան առարկան, պատմական անցեւորն — անյերբ Բուրբուլին Գարբեր ինելով Խորենացու եւ Փ. Սոկրատի մօտ, այնու ամենայնիւ զարմանալի նմանութիւններ կը գտնենք նոցա գրութեան արտաքին ձեւի՝ նկարագրութեան մէջ, մի շարք բառերի ու դարձուածների մէջ: Ո՞ր տեղից են ուրեմն առաջացել այս տեսակ բառացի նմանութիւնները:

Այստեղ ինքն ըստ ինքեան հարց է ծագում Խորենացու գրութեան ձեւի մասին, սորան յատուկ մատենագրական էղանակի մասին, որ՝ նաեւ անկախ Մ. ու Փ. Սոկրատի խնդրից եւ դորանից շատ վաղ, արդէն դիտուած է եւ հաստատուած<sup>1</sup>. այն է՝ հայ պատմագիրը, բաց ի

1 Համեմատե՛ նոր Հայկու. Բուրբուլին, Առաջարան (Վենետիկ, 1836), նորայրի «Քննասեր», Բ., Հ. Յ. Տաշեանի Ուսումնասիրութիւնք Սողոմոն-Վալիսթեանի (Ազգ. Մատ. Ե. Վիեննա, 1892.), իմ հետազօտութիւնս՝ «Армянскій эпосъ» եւ այլն:

ուղղակի ազգային պատմութեան վերաբերեալ  
 իւր մի քանի աղբիւրներից, ունէր իւր ձեռքին  
 նաեւ ոչ սակաւ կրօնական, փիլիսոփայական  
 եւ պատմական գրուածքներ հայերէն թարգ-  
 մանութեամբ, որոնք նորան իբրեւ օժանդակ աղ-  
 բիւր էին ծառայում՝ եւ յատկապէս ոճաբա-  
 նական նիւթ՝ առանձին բառեր, դար-  
 ձուածներ անգամ եւ հատուածներ մատակա-  
 րարելով նորան, ինչպէս յիրաւի եղած են  
 նորա համար Ս. Գրքի, Եւսեբիոս Աեսարացու,  
 Կալլիսթենէսի, Փիլոնի, Գրիգոր Նազիանզացու,  
 Գրիգոր Նիւսացու եւ ուրիշների հայ թարգմա-  
 նութիւնները: Այսպիսի օժանդակ-աղբիւր եղած  
 է Խորենացու համար եւ Փ. Սոկրատ:

Սոկրատ իւր Ե. գրքի 25<sup>րդ</sup> գլխում պատ-  
 մում է բաւական մանրամասն Մեծն Թէոդոսի  
 պատերազմը բռնակալ Եւգինիսի հետ, որ՝  
 սպանելով արեւմտեան Կայսր Աղենտինիանո-  
 սին, տիրել էր Հռոմին: Կռիւր տեղի ունեցաւ  
 Թէոդոս Կայսեր մասնակցութեամբ Գաղղիայում,  
 ուր Բակուրիոս կայսերական զօրավարի քաջու-  
 թեան շնորհիւ յաղթուեց բռնակալը եւ անձնա-  
 տուր լինելով՝ սպանուեց զօրականներից կայսեր  
 ոտների տակ: Այդ նկարագրութիւնը համարեա  
 բառացի՝ ունին Մ. ու Փ. Սոկրատ, թէեւ եր-  
 կրորդը՝ բաց ի դորանից, ներկայացնում է ըստ  
 սովորութեան՝ իրեն յատուկ աննշան յաւե-  
 լուածներ, որոնք այսու ամենայնիւ չեն կարող  
 կասկածի ենթարկել նոցա հեղինակի անմիջական  
 կախումը Մեծ Սոկրատից:

ԱՏաւասիկ Փ. Սոկրատի պատմածը.

“... Եւ հասեալ (Թէոդոս Այսեր) ի  
 Գաղիայ յուրվք ի բարբարոսացն գան առ Թէո-  
 դոս մարտակից լինել ընդ նմա ընդդէմ բռնա-  
 կալին (Եւգինեայ) ... Եւ խմբեցաւ պարերազմ  
 առ գետովն որ կոչի Փուիգդոն ... իսկ բարե-  
 պաշտն Թէոդոս ետես պարտեալ եւ լքեալ  
 զայլազգիսն, որ մարտակիցք նորա էին, ի մեծի  
 հանդիսի լիեալ ընդէց լինին՝ ի գետին եւ  
 մեծաւ հառաչանօք եւ արտասուօք յօգնութիւն  
 կոչէր զԱստուած ... անդէն շօրացեալ եղեն  
 ի վերն զօրութենէն շօր թագաւորին: Չի  
 Բակուռիոս զօրավար թագաւորին ... պատա-  
 ոէր զուազմ մարտին եւ դարձոցանէր ի քա-  
 խոսք զմարտուցեալն. եւ բազում մահս եւ  
 վիրաւորս առնէր ի խնամեացն: Բայց լինէր եւ  
 այլ զարմանալիք. հող՝ ուժգին հարեալ ընդ-  
 դէմ բռնակալին եւ զօրաց նորա եւ զնետս  
 իւրեանց ի ձգողսն դարձուցանէր ... Չի Տէր  
 էր, որ պատերազմէր ընդ բռնակալին, ընդու-  
 նելով զթագաւորին զաղօթս ... Բնիկ-  
 պար-բռնակալն: Չի ոչ էր հնար զնմա փախ-  
 չել՝ ի հեղութիւն թագաւորին վստահացեալ,  
 ընթացեալ յոտս թագաւորին անկանէր, աղա-  
 չէր զփրկութիւն ... իսկ անդէն զինուորքն հա-  
 տին զխմբիւն զբռնակալին Եւգինի: Եւ այսպէս  
 բարձաւ չարն ի միջոյ եւ եղեւ խաղաղութիւն ...  
 իսկ Առօրօստիոս, որ այսքան չարեաց պատ-

1 “Լինին” սխալ լինելու է՝ փոխանակ զինին, ինչպէս  
 ունի եւ Մ. Սոկրատ:

ճառ եղել . . . փախուցեալ եւ ոչ հարացեալ  
զերծանիլ ի հետամտիցն, ընդ ինքեան սուր  
եղեալ «արախեցաւ շարն . . .» (էջ 479 — 483):

Խորենացին՝ նկարագրելով իւր Ք. գրքի  
37<sup>րդ</sup> գլխում Հայոց մեծ պատերազմը՝ Պարսիկ-  
ներին առաջնորդող դաւաճան Մեհրու-  
ժանի դէմ, Հայոց յաղթութիւնը՝ Մեծն  
Թէոդոս կայսեր զօրքերի օգնականութեամբ,  
եւ Մեհրուժանի սպանումը — այլ աղբիւրների  
թիւում՝ օգտւում է եւ Փ. Սոկրատի վերո-  
յիշեալ տողերից, թեթեւ փոփոխութեամբ  
յարմարցնելով դոցա իւր պատմութեան ար-  
տաքին, ձեւական մասերին:

« . . . Եւ իմքեցաւ պարտազմն ի դաշտին որ  
կոչի Չիրաւ . . . Արդ իբրեւ ետես Մեծն Ներ-  
սէս զայն ամենայն, ել նա ի կատար լերին Նպա-  
տայ եւ ամբարձ զձեռս իւր յերկինս ի խնդրուածս  
. . . Քննչեւ պարտեցաւ երկրորդն Ամաղեկ . . .  
իսկ ի բախելն զմիմեանս . . . հող՝ սաստիկ  
ի մերոցն կուսէ ընդդէմ պարսկականին  
փչեալ . . . Եւ յարձակեալ Սպանդարատ (կամ-  
սարական) եւ հերձեալ զխումբն . . . ի փա-  
խուսոյ դարձուցանէր: Եւ այսպէս ի վերինն օգնու-  
հանուրեմն զօրացեալ հասարակ զօրն Յունաց եւ  
Հայոց, դիակամբք Բշնամեաց լցին զդաշտն  
ամենայն . . . Բայց ամբարշտին Մեհրուժանայ  
վիրաւորեալ ձին ոչ հարաց երագել ընդ փա-  
խըստեայսն, որում աճապարեալ հասանէ սպա-  
րապետն Հայոց Սմբատ: (Հետեւում է շամիւրի  
ծանօթ պատմութիւնը:) Եւ մինչդեռ տաք էր

(շամփուրն) իբրեւ զհուր, եղ (Սմբատ) ի Գլխի  
Մեհրուժանայ է- այնպէս սարակեցաւ շարն: Ե-  
յայնմ հետէ խաղաղեցաւ երկիրն . . . :

Թէ արդարեւ խորենացու այս գլուխն էլ  
միւս շատերի նման մի քանի աղբիւրից յօրի-  
նուած մօզաիկ է, ուր Փ. Բուզանդ՝ թէեւ  
կերպարանափոխուած, պատմութեան հիմքն է  
կազմում, իսկ մնացեալները՝ երկրորդական պա-  
րագաներ, — պարզ է առաջիկայ ցուցումներից:

Յիշեալ 37<sup>ր</sup> գլխի ընդհանուր բովան-  
դակութիւնը, պատմական եղելութիւնները, որ-  
պէս եւ Յունաց Չահանափոխ շարն նկարագիրը ա-  
ռած է Բուզանդից (Ե, 4, 5, 43), որ ի միջի այլոց,  
բողորովին տարբեր է պատմում Մեհրուժանի  
սպանումը, եւ այն՝ առանց խորենացու հովանաւ-  
որեալ՝ Բագրատունի իշխանի մասնակցութեան:

Յունաց վիշապանիշ գրօշակների  
նկարագիրը — “Բայց զվիշապացն ճանոսա՞ս  
անափն քերանաբացո-նեամք ուռուցեալ ի փշմանէ  
օդոյն . . . ” — առած է Գրեգոր Նազիանզացոց. —  
“Վիշապացն անա-որ քերանաբացո-նեամք շնչեցեալք  
եւ ձգմամբ փողփողեալք՝ ճանոսա՞վն խայ-  
տաբղիտ անկուածովքն, հեշտալի միանգամայն  
եւ ահաւոր տեսութիւն ” եւն: (Առ Յուլիանոս, Ա.  
2<sup>ր</sup> գր., Վիենն. Մխիթ. Nr. 217, թուղթ 182 բ:)

Արեգակի ճառագայթների ցոլումը  
պղնձապատ վահանների վերայ — “իսկ ի ծագել  
արեգականն ընդդէմ մերոց զօրացն, է պղնձապատ  
վահանացն նշոյլ գլխաւոր փայլաբակին իբրե-  
յամ- պոյ մեծէ եւ ի նոցանէ ի գուրս ոստչէին ի մե-

րոց նախարարացն քաջ զբահաւոր՝ որպէս  
 Գայլաբախանց ծառագայլէ՛, — առած է Ս. Գրեթը.  
 “Իբրեւ անտի արեգան ծայրս արձակէր, առ-  
 Տասարակ է զբահաւոր պատենազէն պղնձապար  
 զահանացն նշոյլէ զլէրաթէ՛ Գայլաբախէին, եւ ծառա-  
 գայլէ՛ Տատանէին իբրեւ Գայլաբախանց Տրոյ:” (Ա  
 Մակար. Զ. 39):

Աւելի արժանի է ուշադրութեան՝ Խորե-  
 նացու փոխառութեան միւս դէպքը:

Ս. Սեղբեսարոսի (Ընդարձակ) վարքի հե-  
 ղինակը՝ իւր գրուածքի սկզբում (էջ 698—  
 699), նուիրում է մի հակիրճ, բայց գեղեցիկ նկա-  
 րագիր այդ քահանայապետի հոգեւոր եւ բա-  
 րոյական առաքինութիւնների, որոնց միայն ընդ-  
 հանուր իմաստն է հաղորդում Համառօտ վարքը:<sup>1</sup>

<sup>1</sup> Ահաւասիկ Փ. Սոկրատի (կամ՝ որ նոյնն է՝ Հա-  
 մառօտ վարքի) նկարագիրը. “...այսպէս ի Քրիստոսի ըն-  
 ծայեր ի քահանայութիւն վիճակս, որպէս եւ վայելէր:  
 Եւ Գերազանցեալ եւ վայելչացեալ այրն ճանաչիւր  
 ի ժառանգաւորս եկեղեցւոյն Հռովմայ. վերագոյն ըստ  
 արդարութեան աւետարանին յառաջանայր յամենայնի՛  
 պինդ հաւատով, եւ վարուքն (var. առաքինի վարուք) եւս  
 պնդագոյն. բարեխորհ, ողջախոհ, սուրբ, մեկնեալ յամե-  
 նայն իրաց շարաց. հեզաբարուք (var. հեզ բարուք) եւ  
 խոնարհ սրաիւ, երկայնամիտ եւ մարդասէր, ահաւոր մե-  
 ղուցելոցն, հրեշտակական դէմք, հրեշտակական եւս շարժ-  
 մամբ եւ բարբառով, եւ յամենայնի զսրբոցն ունէր  
 զնմանութիւն, որոց աշակերտեալն էր զճշմարտութիւնն ի  
 Քրիստոս Յիսուս: — Յայտոսիկ լինէր վախճան հայրապե-  
 տին Մեղիտեայ...:” (էջ 699: Տես եւ Տեսութիւն Սեղ-  
 բեսարոսի պատմութեան, հրատ. Արժ. Զ. Բարսեղ Սար-  
 գիսեանի, Վենետիկ 1893, էջ 7—8, — որից առել ենք եւ  
 մեր յառաջ բերած յո՛ւնարէն բնագրի համապատասխան  
 հատուածը:)

“Երեսնամեայ ահայ ամաց էր, յորժամ  
 ի սրբոյն Մեղիտիագէ ի սարկաւազութեանն  
 նախաձեռնարկեցաւ պատիւ ամենայնն ապա  
 պատուով ուրախացեալ եւ բարեվայելչա-  
 ցեալ +ան զբոլոր վիճակաւորսն: Ասան զի  
 ամբարտաւանս-նի-ն եւ ճարդահաճոյս-նի-ն աւ ի  
 նորա վարս արեղի գրանել ոչ ուրեք հարացին. այլ  
 հեղ եւ բարիահամ եւ բարեխորհուրդ գուժ, եւ  
 երկնայնոցն շարդարեալ սովորս-նեամբ, զին+ն բուրեց  
 ցոցաներ. վասն զի գոյր արեւեամբ հրեշտակահան,  
 քանի- տրամա պայծառացեալ, գործով սուրբ,  
 ճարձով արտափայլեալ, սար[ ]սի-+ անճառ, խոր-  
 հըրդակցո-նեամբ զեթ, հասարով ուղիղ, յոսով  
 համբերողահան, սիրով անկեղծաւոր: Այլ վասն զի  
 զբուրսն նորա զողորմ-նի-նսն ոչ ե՛մ բաւահան աւել,  
 առ ի մասնաւորականսն նորա գործեցեալս քար-  
 յոցեց զբանս: Ս. Միղղիագոսի եպիսկոպոսի  
 առ Աստուած զգնացս առնելով...:”

Դնում ենք այստեղ եւ յոյն բնագիրը,  
 որը բաւացի ճշտութեամբ՝ ստիկորէն փոխա-  
 գրել է հայ թարգմանիչը իրեն լեզուին յա-  
 տուկ եւ բնորոշ ոճով:

„ Η γὰρ ὑπερηφανεία, καὶ ἡ ἀλαζονεία  
 ἐν τοῖς αὐτοῦ τρόποις χώραν ἔχειν οὐδαμῶς  
 ἠδυνήθησαν. ἀλλὰ προσηνῆς καὶ αγαθοῦθελῆς,  
 καὶ ταπεινόφρων ὑπάρχων, οὐρανίοις ἦθεσιν  
 κεχοσμημένον ἑαυτὸν πᾶσιν ἐπιδείκνυεν; ἦν  
 γὰρ τῇ θείᾳ ἀγγελοειδῆς, τῷ λόγῳ διαλάμπων,  
 τῷ ἔργῳ ἅγιος, τῷ σώματι ἐρόωμενος, καὶ  
 τοῖς ἦθεσιν ἄριστος, τῇ συμβουλίᾳ μέγιστος,

τῇ πίστει ὀρθόδοξος, τῇ ἐλπίδι ὑπομονητικός,  
 τῇ ἀγάπῃ ἀνυπόκριτος. Ἀλλ' ἐπειδὴ, πάντα αὐ-  
 τοῦ τὰ κατορθώματα, οὐχ οἷός τε εἶμι κατα-  
 λέγειν, ἐπὶ τὰ μερικῶς πραχθέντα ὑπ' αὐτοῦ  
 τρέψω τὸν λόγον. Τοῦ ἁγίου τοίνυν Μελτιάδου  
 πρὸς τὸν δεσπότην Θεὸν τὴν πορείαν ποιησά-  
 μενος...»

Միտ դներու է մանաւանդ առաջիկայ յոյն  
 դարձուածներին. — τῷ λόγῳ διαλάμπων =  
 “բանիւ որմայայծառայել”, — ἡ γὰρ ὑπε-  
 ρηφανεία καὶ ἡ ἀλαζονεία ἐν τοῖς αὐτοῦ  
 τρόποις χώραν ἔχειν οὐδ' αμῶς ἠδυνήθησαν =  
 “Ասան զի ամբարտաւանութիւն եւ մարդաս-  
 ճոյութիւն — է նորմ վարս տեղի քանակ ու  
 — բէ+ կարացին.” — τῷ ἔργῳ ἅγιος =  
 “գործով — բէ.” — Հետաքրքրական է եւ  
 τῷ σώματι ἐβρώμενος = “մարմնով որմայ-  
 լել”, թէպէտ ἐβρώμενος իսկապէս զօրեղ,  
 ուժեղ է նշանակում (ճօննսմ), իսկ “արտա-  
 փայլեալ” ձեւի համար գուցէ ἐκλάμπων կամ  
 նման մի բառ սպասելու էր յոյն բնագրում  
 ինչպէս որ փոքր ինչ ներքեւ յոյնի “ἐκλάμπειν”  
 (էջ 35) հայր (Ը.Վ.) արդարեւ “արտափայլել”  
 է թարգմանել (էջ 736): Նկատենք վերջապէս,  
 որ Ընդարձակ վարքը ունի մի պարբերութիւն —  
 “Երեսնամեայ ահայ ամաց էր... եւ բարեվայել-  
 չացեալ քան զբոլոր վիճակաւորսն”, — որ  
 պակասում է յոյն բնագրում (ըստ հրա-  
 տարակութեան Արժ. Հ. Բ. Սարգիսեանի,  
 էջ 7):



Հիմա դառնանք Խորենացուն: Սա՛ իւր  
Գրքի 67<sup>որդ</sup> գլխում «Փոխումն յաշխարհէ Սա-  
հակայ եւ Մեսրոպայ երանելոյ», գլխաւորե-  
լով այդ երկու մեծ մարդոց գործունէութիւնը,  
տալիս է մեզ նոյն անձնաւորութիւնների բա-  
րոյական պատկերը — համառօտ՝ Սահակի մա-  
սին եւ փոքր ինչ ընդարձակ՝ Մաշտոցի մասին:  
Արդ՝ վերջինիս նկարագրի մէջ ասանուհինք ասող  
Քառացի փոխ է առել Խորենացին Սեղբեստրոսի  
ընդարձակ վարքի վերոյբերեալ հատուածից՝  
իրեն յատուկ ճարտարութեամբ յարմարցնելով  
Հռոմի հայրապետին վերագրած բարեմասնու-  
թիւնները Հայոց մեծ վարդապետին: — Պէտք  
է միեւնոյն ժամանակ նկատել, որ փոխառած  
հատուածը այնպէս սերտ եւ անանջատ կապա-  
կցութիւն ունի ամբողջ 67<sup>որդ</sup> գլխի հետ, որ  
անկարելի է բաց թողնել այդ տողերը՝ առանց  
զգալի կերպով վնասելու Մաշտոցի պատմու-  
թեան հետեւողութեանը եւ նոյն գլխի ընդ-  
հանուր բովանդակութեան: Ապա ուրեմն ուրիշ-  
ներից յետ ժամանակի ներմուծուած համարել  
նորան բնաւ կարելի չէ:

Ահա՛ եւ Խորենացու հատուածը:

«...Եւ զկնի վեց ամսոց անցելոյ, յերեք-  
տասանն մեհեկանի, եւ երանելին Մեսրոպ փո-  
խեցաւ յաշխարհէ ի Աղարշապատ քաղաքի.  
գերազանցեալ ասն զամենայն, որք զայնու  
ժամանակաւ էին առաքինիք: Քանզի ասքառ-  
ասանուհին է ճարդահաճուհին ի նորա (var.  
երեք օրինակ՝ աս ի նորա) վարս արեղի գրանել

երբէք ոչ կարացին. այլ հեղ է լաւահամ է-  
 քարեխորհո-րդ գուճ, է- երկնայնոցն շարդարեւ  
 սոճորո-նեամբ՝ զինն քուրից ցո-ցաներ: Վասն զի  
 գոյր արեւելեամբ հրեշտակական, մտօք ծննդական,  
 քանի-տ պայծառ, գործով ժուժկալ, մարմնով ար-  
 արաճայլեալ, սարասի-տ անճառ, խորհրդակցո-նեամբ  
 Տեժ, հասարով ուղիղ, յասով համբերող (var.  
 Լամբր. — համբերողական), սիրով անկեղծա-որ,  
 ուսոցանելով անյանջրոյն: — Այլ վասն զի զքուր  
 ուղղո-նի-նս նորա ոչ քառական է՞ ասել, ի հան-  
 գիստ նորա նշխարացն դարձո-ցից զքան: Որպէս  
 լուայ ի բազմաց...» (Խոր. Պատմ. Հյ. Վենե-  
 տիկ, 1865, էջ 270—271.)

Այստեղ արժանի են մտադրութեան —  
 Խորենացու «գերազանցեալ» բառը, որ գտնում  
 ենք Սեղբեստրոսի Համառօտ վարքի համապա-  
 տասխան հատուածում եւ որը նախադասել է  
 հայ պատմագիրը՝ Ընդարձակ վարքի «բարե-  
 վայելչացեալ» ճապող ձեւին. — «մարդա-  
 հաճութիւն» կարճ ձեւը՝ փոխանակ հայ թարգ-  
 մանութեան «մարդահաճոյութիւն». — «եր-  
 բէք ոչ» կամ դիտմամբ փոխուած է «ոչ  
 ուրեք» (οὐδαμῶς)-ի տեղ, եւ կամ յետոյ

1 Եթէ Հ. Մեսրոպ առարկէ, թէ «գերազանցեալ»ը  
 Փ. Սոկրատն է առել Խորենացուց՝ հետեւելով սորա «մեծ  
 եւ անպայման հեղինակութեան», — մենք կը հարցնենք՝  
 ինչո՞ւ հապա նա, Փ. Սոկրատը, բոլորովին անտես է անում  
 իւր համար «կանոնական նշանակութիւն», ունեցող հայ  
 պատմագրին եւ այնպիսի կարեւոր կէտում, որպէս Մաշ-  
 տոցի (կամ որ նոյնն է, Սեղբեստրոսի) հրաշալի նկա-  
 րագիրն է:

սրբագրուած ընդօրինակողներինց. — «մտօք  
 ծննդական» չունի ընդարձակ վարքը (եւ ոչ  
 Համառօտը), որովհետեւ նա՝ ինչպէս տեսանք,  
 չկայ եւ յոյն բնագրում. իմ կարծիքով, այդ՝  
 խորենացու յաւելցրածը պէտք է լինի, որին  
 յատուկ են նման դարձուածներ, օրինակ՝ «մտաց  
 ծննդականութիւն» (Պատմ, Հ. Ա. 3). —  
 «բանիւք պայծառ» ակներեւ է, որ կոկուած է  
 «բանիւ տրամադարձացեալ» բառացի տգեղ  
 թարգմանութիւնից (διαλάμπων), որ անշուշտ  
 ներհակ էր եւ խորենացու կիրթ ճաշակին եւ՝  
 ընդհակառակը, սովորական եւ ընտել ըն-  
 դարձակ վարքի յունամոլ թարգմանչին: Հմմտ.,  
 օրինակի համար, եւ «տրամափախուստ» կազ-  
 մութիւնը, էջ 693. — «գործովք ժոժիւլ»  
 նպատակով փոխակերպած է (— Յոյնի եւ հայ  
 թարգմանչի «τῶ ἔργῳ ἁγίῳ» =) «գործով  
 սուրբ» ձեւինց: — Գարձեալ՝ խորենացու  
 «ուսուցանելով անձանձրոյթ» չունի ընդարձակ  
 վարքը (եւ ոչ Համառօտը), որովհետեւ՝ ինչ-  
 պէս տեսանք, նա չկայ եւ յոյն բնագրում. այդ  
 դարձուածը՝ ինձ թվում է, փոխ է առել խորե-  
 նացին Փոքր Սոկրատից, որ գործ է ածում նոյն  
 խօսքերը վերաբերութեամբ Յովհանն Ոսկե-  
 բերանին. տես էջ 498 — «անձանձրոյթ  
 յուսուցանելն»: — Ընդարձակ վարքի «Այլ  
 վան զի զբուրան նորա (Սեղբեստրոսի) զուղ-  
 լի-նան ոչ է՛ բաւական տեւ, առ ի մասնաւորա-  
 կանսն նորա գործեցեալս դարձոյնց զբանս» —  
 փոխուել է խորենացու մօտ՝ «Այլ վան զի զբուր

«դղու-Նի-նս նոր» (Մաշտոցի) «չ բա-ական է՞  
 ...ել, ի հանգիստ նորա նշխարացն դարձն-ցից  
 շքան» : — Վերջապէս այն հանգամանքը, թէ  
 Ընդարձակ վարքի մեզ հետաքրքրող հատու-  
 ծում կայ մի պարբերութիւն՝ «Երեսնամեայ  
 ահայ ամաց էր... բարեվայելչացեալ Կան  
 զբոլոր վիճակաւորսն», — որ պակասու-ժ է  
 յոյն Բնագրու-ժ, եւ՝ ընդհակառակը, նկատվում է  
 Խորենացու փոխ առած տողերի մէջ՝ «գերա-  
 զանցեալ Կան զամենայն, որ զայնու ժամա-  
 նակաւ էին առաքինիք», — մեր կարծիքով  
 ցոյց է տալիս ականերեւ կերպով հայ պատմագրի  
 «դղու-Նի-նս նոր»-ն իսկու-ժը ներկայ, մեր ձեռքը  
 հասած Սեղբե-տրու-ի Ընդ-ըն-ի վեր-ի հայ Բնագ-  
 րու-Նի-նս, որ՝ համաձայն գրչագիրների յիշա-  
 տակարաններին, Աբաս Գրիգոր Զորոյփո-  
 րեցու ձեռքով է կատարուել 678 թուականին :

Գառնալով այն խնդրին, թէ Խորենացին,  
 ինչպէս տեսանք, իւր պատմութեան ընթացքում,  
 նոյն իսկ համառօտ նկարագիրների մէջ, յիրաւի,  
 սիրում է օգտուել այլ եւ այլ բովանդակու-  
 թեամբ բոլորովին տարբեր աղբիւրներից՝ քա-  
 ղելով նոցանից կարճ ու ազդու ասացուածներ,  
 — դորա փայլուն ապացոյցը կարող ենք գտնել  
 նոյն 67<sup>ր</sup> գլխում : Ս. Սահակի նկարագրում  
 Խորենացու մէջ բերած գեղեցիկ ասացուածը —  
 «պատու-եաց (Սահակ) զպատիւն, պատիւ-եաց է  
 հոշնականէն<sup>1</sup>, փոխանորդեաց զիւնս» ամբողջապէս

<sup>1</sup> Խորենացու «ի կոշնականէն» ըստ երեւութիւն  
 սխալմամբ է առաջացել գրչագիրներում՝ փոխանակ «ի

առած է Գրիգոր Նազիանզացու մի ճառի հայ թարգմանութիւնից. «...Եղիցուք մաքուր Արարչին, պարուհացուք զպարկերն, պարկաւեացուք է ինչ՝ ճանէն, փոխադրեսցուք<sup>1</sup> զկեանս», : (Տես «ի բանս եւ ի հաւասարեցուցիչն», 2<sup>ա</sup> գր. Վիենն. Մխիթ. Nr. 217, թղթ. 171<sup>բ</sup> :)

Նոյն իսկ Ս. Մաշտոցի վերը յիշած նկարագրից մի քանի տող յետոյ՝ Խորենացին իւր «զպարկեշտն զայն մարմին եւ նախ քան զճանն իւր լիւլ է Բեւեւ-Լիւն», աջող նմանութիւնը քաղում է դարձեալ Գր. Նազիանզացու ճառերից. «մանր ոսկերք եւ նախ քան զճանն իւր լիւլ է Բեւեւ-Լիւն», : (Տես Նորայր, Քննասէր, Բ, էջ 11 :)

Եւ այսպիսի ծաղկաքաղը մանաւանդ թարգմանական գրուածքներից, ինչպէս վերը նկատեցինք, Խորենացու սիրածն է, նորա բնորոշ մատենագրական եղանակն է, որ տեսնում ենք նորա Պատմութեան համարեա ամէն մի երեսում, — այն է՝ Հայերին ամենեւին վերաբերութիւն չունեցող, բայց որ եւ է կողմից հետաքրքրական նկարագիրները, ասացուածները անգամ եւ կարճ դարձուածները յարմարցնել իւր հայրենակիցներին, իւր նկարագրած անձնաւորութիւններին :

Կոչմանէն, ինչպէս ունի եւ Գր. Նազիանզացու բնագիրը՝ «ἡ κλήσις» ինչ-ճ : Տես նոյն ճառի բնագիրը Migne, Patrolog. T. XXXV, p. 1050 :

<sup>1</sup> «Փոխադրեսցուք զկեանս», բառացի բնագրի «μεταδώμεθα τὴν ζωὴν» է. Խորենացին գիտմամբ, թէ անգիտակցաբար, «փոխադրել», է փոխել, որ տարբեր նշանակութիւն ունի :

Այսպէս՝ Եւսեբիոս Աեսարացու Քրոնիկոնի հայ թարգմանութեան մէջ գտնուած աւանդութիւնը Տէրմոնի որդու Մեծոնի Տրովադացուց Պրիամին օգնութեան գնալու եւ այնտեղ Հելլէններից սպանուելու մասին, — հայ պատմագիրը առանց այլ եւ այլի վերագրում է հայ Ջորճայրին: — Կալլիսթէնի հայ թարգմանութեան մէջ բերած Գարեհի ու Աղէսանդր Մալեդոնացու նկարագիրը՝ Պարսիկների յաղթուելուց յետոյ, Խորենացին պատշաճեցնում է հայ Արշակունի Երմանդին եւ Արարշէսին: — Բ. Մակաբայեցոց գրքում յիշուած ալեզարդ եւ առաքինի Եղիշուր Հրէի նկարագիրը, որպէս եւ Սողոմոնի Առակների մի երկու ասացուածները, Խորենացին յարմարցնում է Սթասթաֆրաստանոն, եւ այլն եւ այլն: Նոյն ուղղութեան շնորհիւ՝ հայ պատմագիրը օգտուել է եւ Սեղբեստրոսի Ընդարձակ վարքից՝ Սեղբեստրոսի նկարագիրը Մալեդոնացին յարմարցնելով:

## 2.

Անցնինք Սոկրատի հրատարակչի երկրորդ եզրակացութեան:

Արժ. Հ. Մեսրոպի ապացոյցների տարօրինակութիւնը այն է, որ՝ հայ պատմագրի վարկը պաշտպանելու համար, նա սովորաբար մատնացոյց է անում «մեր ձեռքը չը հասած» «ղբի-ընէր», մի կողմ թողնելով բանաւոր պատճառները եւ աւելի հաւանական երեւոյթները: Խորենացին՝ նորա կարծիքով, օգտուել է Սեղբեստրոսի

Վարդի «մեր ձեռքը չը հասած», հայ թարգմանութիւնից. — Խորենացին օգտուել է Ագաթանգեղի Պատմութեան նոյնպէս «մեր ձեռքը չը հասած», մասերից՝ Մ. Կոստանդիանոսի հրաշալի դարձի, Ս. Նունէի եւ այլոց մասին:

Ս. Սեղէտարի Վարդի «մեր ձեռքը չը հասած», մի այլ (երրորդ) հայ թարգմանութեան ենթադրութիւնը այնքան անհիմն է թվում մեզ, որ մենք աւելորդ ենք համարում դորա վերայ երկար կանգ առնել: Խնդիրը այստեղ երրորդ կամ չորրորդ թարգմանութեան հաւանական լինելու մասին չէ. Խորենացու Պատմութեան մեզ հետաքրքրող հատուածների նմանութիւնները բոլորովին համաձայն են յիշեալ Վարդի երկու մեզ հասած հայ թարգմանութիւններին. մենք այդ տեսնում ենք, մենք շօշափում ենք, որովհետեւ դորա մեր առաջն են դրուած եւ մենք միջոց ունինք համեմատելու, դոցա եւ ստուգելու: Բայց ի՞նչ կարելի է ասել մի երրորդ թարգմանութեան մասին, որի գոյութիւնը աւելի քան կասկածելի է. եւ ի՞նչպէս կարելի է լուրջ կերպով հիմնուել այդպիսի երեւակայեալ գրուածքի վերայ, որպէս անում է Հ. Մեսրոպ: Մենք կարծում ենք, որ վիճելի խնդիրը լուծելիս՝ կարելի չէ դիմել նոյնչափ եւ աւելի վիճելի ու կասկածելի պարագաների, որից միայն մթութիւն եւ ամէն տեսակ շփոթութիւն կ'առաջանայ, այլ հիմնուելու է կարելոյն չափ հաստատուն կռուանների վերայ, որպէս զի դոցանից հետեւցրած եզրակացութիւններն էլ կա-

րելոյն չափ մօտ լինէին ճշմարտութեան կամ՝  
գէթ հաւանականութեան: Քննադատը այս միշտ  
պէտք է ունենայ ի նկատի:

Ագաթանգեղի վերաբերմամբ դիտելու է, որ  
Խորենացու Բ. գրքի 83 եւ 86 գլուխների վեր-  
ջում յիշածը — «որպէս (համառօտ) ուսու-  
ցանէ քեզ Ագաթանգեղոս», — տեղիք է տուել  
բռնազբօս մեկնութիւնների: Այդ երկուսից՝ ա-  
ռաջին գլխում Խորենացին վկայութեան է կո-  
չում Ագաթանգեղին՝ իբրեւ «դէ-ւոյն իւր  
պատմած առասպելի (եղեփանդական բորո-  
տութեան եւ անմեղ մանուկների արեան մէջ  
լուացուելու մասին), որ մի միայն Սեղբեստրոսի  
Վարքն է հաղորդում, — այլ նախ՝ առ հա-  
սարակ նոյն 83<sup>րդ</sup> գլխի ընդհանուր բովանդա-  
կութեան, այն է՝ Աոստանդիանոսի թագաւորա-  
նալու, Խաչի յաղթութեան նշանը նորան երեւա-  
լու, ճշմարիտ Աստծուն հաւատալու մասին, եւ  
մասնաւորապէս նոյն գլխի վերջին նախա-  
դասութեան. — «զբռնաւորսն ամենայն  
բառնալով Աստուծոյ յերեսաց նորա (որպէս հա-  
մառօտ ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս):»

Եւ իրօք, Հայոց Գարձի հեղինակը իւր  
ձեռն գլխում համառօտ պատմում է Աոստանդիա-  
նոսի թագաւորանալը, ճշմարիտ Աստծուն հաւա-  
տալը, Խաչի յաղթութեան նշանը երեւալը եւ  
եկեղեցի ու վկայարաններ շինելը՝ մասնաւորա-  
պէս շեշտելով «պիղծ եւ անօրէն», Գիողղի-  
տիանոս, Մարտիանոս, Մաքսիմիանոս,  
Ղուկիանոս եւ Մաքսիմիանոս հեթանոս



Թագաւորների եւ բռնակալների «ի միջոյ ջըն-  
ջելու» մասին: Բոլորովին ի զուր է ուրեմն  
Ագաթանգեղի «մեր ձեռքը չը հասած» մա-  
սերի վերայ յոյս դնելը. հրաշքներին շատ  
հակամէտ Հայոց Գարձի պատմիչը՝ լորս երես  
նուիրելով իւր գրուածքում նաեւ Աոստան-  
դիանոսի դարձին, եւ ոչ մի խօսք չէ ակն-  
արկում Խորենացու նկարագրած նոյն կայսեր  
հրաշքի մասին, որը հարկաւ առիթ կ'ունենար նա,  
Ագաթանգեղ, յիշելու՝ գէթ համարօտ, եթէ ի-  
մանար եւ կամենար յիշել:

Պէտք է ասել, որ նոյն այդ ճիւղ գլխում  
չէ էլ նշմարվում որեւէ հետք գրուածքի ընդ-  
հատման, կրճատման կամ աղաւաղման:  
Իսկ ենթադրել, թէ այդ գլխից զատ՝ Ագաթան-  
գեղ նուիրած է եղել Աոստանդիանոսի դարձին  
«յլ պարտօնիւն», որ իբր թէ «մեր ձեռքը չէ  
հասել», մեր կարծիքով՝ կատարեալ կամայա-  
կանութիւն է:

Աերջապէս, Խորենացու նոյն 83<sup>րդ</sup> գլու-  
խում գործածած մի քանի բնորոշ բառերն ու  
դարձուածները — օր. «որդիացեալն» (Աոս-  
տանդիանոս), «յառաջաբերեալ», «մարդա-  
սիրել» — ընդհանրապէս անսովոր լինելով ի-  
րեն՝ Խորենացու ոճին, օտար են միանգամայն  
եւ Ագաթանգեղին եւ՝ ընդհակառակը, յատուկ  
եւ ընտել Մ. եւ Փ. Սոկրատին եւ նոցա կից՝  
Սեղբեստրոսի ընդարձակ եւ Համառօտ վարքե-  
րին: (Հմմտ. էջ 8, 166, 763, 766:) — Այս  
է պատճառը, որ Խորենացու հաղորդած առաս-

պելի նկարագրութեան քառացի նմանութիւնները յատկապէս Սեղբեստրոսի Ընդարձակ եւ Համառօտ վարքերի հետ՝ այլապէս կարելի չէ մեկնել, եթէ ոչ հայ պատմագրի փոխառութեամբ. խորհնացին օգտուել է անշուշտ այդ երկու վարքերին եւ՝:

Որպէս զի այդ մասին էլ տեղիք չը տրուի որեւէ տարակուսանքի, առաջ կը բերենք խորհնացու 83<sup>րդ</sup> գլուխը՝ զուգընթացաբար Սեղբեստրոսի Ընդարձակ եւ Համառօտ վարքերի հետ, նորադէրով նշանակելով փոխառած բառերն ու դարձուածները հայ պատմագրի եւ իւր աղբիւրների համապատասխան հատուածներում, եւ շղագրով նոյն վարքերին միայն յատուկ համանման մասերը:

1 Իմ «Армянский Диоск» հետազոտութեանս տպագրութեան ժամանակ՝ շունենալով ձեռքիս Սեղբեստրոսի Ընդարձակ վարք ամբողջութեամբ, ենթագրեւ էի (էջ 24), թէ խորհնացին իւր 83<sup>րդ</sup> գլխի համար օգտուել է յատկապէս Փ. Սոկրատից: Այժմ՝ Սոկրատի լիակատար հրատարակութիւնը ըստ տեսնելուց յետոյ, ձեռնհաս եմ աւելի ընդլայնելու իմ առաջին եզրակացութեանս շրջանը:

«... Ընդ նոյն աւուրս  
Լինին հարսանիք եւ  
Մտնիմանս Գրգռի  
Գիւղիկի Գրգռի  
Կամեղայ, Գրգռի  
Նմա Կոտանդիանս  
Կեանքի, Գրգռի  
Քաղաքի Գրգռի, որ  
Ոչ էր ի Գրգռի  
Գրգռի, այլ շի-  
Ղիկայ Կոտանդիանս  
Այս Կոտանդիանս  
Բարեկամացեալի հար-  
սանիսն ընդ Տրգատայ  
մեր թագաւորի: Եւ  
յետ ոչ բազում ամաց  
մեռեալ Կոտանդի, փո-  
խանորդ նմա առսքէ  
Գիւղիկեալիսն զնորին  
որդի եւ զիւր Գրգռի-  
ցիաւն Կոտանդիանս:

«... Յայտոսիկ ապա ժամանակս՝ Կոտանդի  
տան՝ հայր Մեծին Կոտանդիանս թա-  
գաւորի զոլով տակաւին տրիբունոս եւ զաւ-  
րաւոր յոյժ, եկն ի Հոսիմայ առ ի պա-  
տերազմ Սարմատացոց: Եւ յաղթել եւ  
զարծնաւ անգրէն էջ ի պանտոկոնոս ու-  
րուսն, յորում էր աղջիկ մի յոյժ գեղեց-  
կակերպ, անուն շեղինի, նմա արփացեալ  
Կոտաս, ննջեաց ընդ նմա... Եւ հասեալ  
ի Հոսիմայ յաղթութեամբ թագաւորեաց:  
Եւ առ իւր կին զԳրգռի Կոտանդիանս  
թագաւորի, յորմէ ունէր որդի անմիա...  
եւ խորհուրդ արարեալ ընդ սինկղիստոսին  
յաղագոս գտանելոյ մանուկ գեղեցկակերպ  
եւ իմաստուն, բայց որք, ամէլ զնա ի պա-  
ղանն զի ի ձեռն երանաց իմոց զնա հանեալ  
որդի կոչեցից... Եւ զայս ասացեալ, ոչ  
գիտէր զառ ի Կոտանդիանս մանուկն ի  
պանդոկոնոզ առ ի շեղինայ, եւ անուն ման-  
կանն Կոտանդիանոս: (Հեռեւում է ման-  
կան գանելու մանրամասն պատմութիւնը,  
էջ 210—13):

Իսկ թագաւորին հաւանեալ... եւ ի  
խնդութեան եղեալ, գիւղիկայ զմանկամբն

«... Ընդ ժամանակս ընդ այնոսիկ Կոտանդիանս  
տաս տրիբունոս զոլով եւ զորաւար եւ յաղ-  
թողի պատերազմին Սարմատացոց, զար-  
ծաւ բազում աւարաւ եւ երեւելի փառօք:  
Եւ եկեալ ի քաղաքն ի պանտոկի եւ ան-  
սեալ աղջիկ մի գեղեցիկ, իմաստուն, կա-  
մեցաւ ննջել ընդ նմա ի գիւղիկին... Եւ հա-  
սեալ ի Հոսիմայ թագաւորեաց բազում եւ  
երեւելի փառօք: Եւ առ իւր կին զԳրգռի  
Կոտանդիանս թագաւորին, յորմէ եղեւ  
որդի անմիա... Եւ արար խորհուրդ ընդ  
սինկղիստոսին, որ խորհրդական կոչի, զի  
զացի մանուկ մի իմաստուն գեղեցիկ յոր-  
դեգութեան, որպէս թէ առ ի շեղինայ  
մանեալ... (Հեռեւում է մանկան գանելու  
մանրամասն պատմութիւնը, էջ 210—13):

Ուրախութեամբ ուրախ լինէր... եւ  
գիւղիկայ արկեալ համբուրէր զորդին... եւ

Սա յառաջ քան ըզ-  
թագաւորելն, մինչ  
դեռ կեանք էր, ոչ  
որեւ ի մարտն եւ  
որդո՞հաւանք մեծաւ  
նշխարաւ, եւ ի յա-  
նախապէս իմացա-  
րէնքն, յիշխից պարու-  
նակեալ գրով VAR. աս-  
տեղք աստեղք) ասէ.  
Այսո՞ւ յաշխիւ. զոր

Կոտանտինոսի, եւ... նախածննեաց զնա  
ի կայսերական պատիւ:

Յայնմ փամանակի Լինի մարտ պա-  
անբազմի առ Բիւզանդացիս: Կոստանդինոս  
կայսր պատանեակ գոլով եւ առեալ նու-  
մբն ոչ սակաւ, սպառազինի հակառակ  
Բիւզանդացւոցն... Իսկ Բիւզանդացւոցն  
տեսեալ զնա ուրբով, գուժարեցան գար-  
չեալ տալ արտերազմ առ փառին: Եւ  
Կոտանտինոս կայսր էր արբեալ եւ յոյժ  
փրփրեալ: Տեսնէ ապա ի զԲիւզանդացիս յայնմ,  
յորում նշխար, տեսնէ ակնբերեակի յիշխո-  
րաւ փամանակն եւ գեղատախտաւ ունեւով  
փերնափէ \* յարեղաց \* այսո՞ւ յաշխիւ: Իսկ  
նորա յարուցեալ եւ յիշեալ զտեսեանն,  
ի կնիւթն զնա եղեալ, կռիւ զքուրմն ճե-  
թանսաց եւ հարցանէ զնսա. թէ որ  
Աստուաց է նշանս այս: Որս նորա ասն.  
նշանս այս ոչ է որոց ի փրայ երկիւ ա-  
տուածց, այլ որ Եսէիկից գոյ Աստուած.  
Քան զի կաշխիւ մեծ քան զԵսէիկս է,  
զորս մեծ պաշտեմ... Հաւանեալ ապա  
կայսրն Կոստանդինոս առ ի բռնցն հե-  
թանսաց... հրամայաց արեւելք զարկի  
կաշխիւ սու զուրկիս հան-  
հարսն սու զուրկիս հան-  
հարսն սու զուրկիս հան-

տեսեալ զառաջարկն. թիւն պատանեակն Կո-  
տանդինոսի թագաւորին եւ սիւնկոտոսին  
նախածննն զնա ի կայսերական պա-  
տիւ...:

Եւ յեա այսր ամենայնի Լինի մարտ  
ընդ Հովակիմացիսն եւ ընդ Բիւզանու-  
ցիս: Եւ առաքէ թագաւորն Կոտանդին  
զորդին իւր Կոստանդինոս ընդդէմ նոցա  
ի պատերազմ բազում զօրք, եւ յաղթա-  
հարեցին Բիւզանդացիքն զզօրսն Կոտան-  
դինոսի: Եւ յոյժ արբեալ եւ տարակու-  
սեալ հոգայր, թէ զինչ արտացէ առ փա-  
ռին ի պատերազմն: Եւ արամեալ նշխար,  
եւ տեսնէ ի տեսեալն զԲիւզանդացիս  
աստանան (VAR. արեղաց նշան) իւրի,  
եւ բան զի ասէր յու մեմէ: Չայս նշանս արա-  
րեալ առաջի, յաղթեա պատերազմից եւ այլ  
մարտից: Եւ ի կնիւթն զնա զարթեալ եւ  
կռիւց անդէն փողաղակի զքուրմն ճե-  
թանսաց եւ պատմեաց նոցա զտեսիւն եւ  
ասէ ճնոսա. որոյ Աստուոց է նշանս այս...  
Եւ ասն, ոչ է նշանս այս մեր աստուածցն,  
այլ կաշխիւն քրիստոսի... Եւ հաւատաց  
կայսրն Կոստանդինոս եւ հրամայեաց  
արեւելք զօրկալ կաշխիւ, որպէս ցուցա-  
նալ ի տեսեանն: Եւ եղեւ ի փողիւն պա-  
տերազմ սաստիկ, եւ հրամայեաց զնշան

Թանուսաց... հրամայեաց... զորքսուպ խաշին, որպէս ցուցաւ... Եւ եղև ի վաղիւն պա- տերազմ սաստիկ, եւ հրամայեաց զնշան

